

գրութիւնը, որ քաղուածք մ'է Դաւիթ Անյաղթէն եւ Գրիգոր Նիւսադիէն. (Շիրակացի. էջ 30):

Փարիզի Ազգ. Մատենագարանը ունի հայերէն ձեռագիր մը ժողովածու ինսասաիրական եւ Աստուածաբանական գրուածոց անուամբ, որ կը պարունակէ Գրիգոր Նրուսազլիմացւոյ սկիզբն ինսասաիրութեան խորագրով մէկ գրուածքը. ձեռագիրն ընդօրինակուած է ԺԳ. դարուն, տեղը և գրիչը անյայտ (CMA. էջ 155-6):

ԳՐԻԳՈՐ ԷՖԲԷՐԷՅԻ, ԿԵՍՍՐԻԱ. — Բրձ. 1783ին Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է Նալեան Յակոբ պարք.ի Մեկնութիւն եօրն խորհրոց եկեղեցւոյ եւ Դիոնիսիոսի Արխապագացւոյն Յաղագս երկնային քահանայապետութեան գրքերն, որ 1794ին Ս. Յակոբի վանքին կը նուիրուին Թէքիրտաղցի Յարութիւն եպս.ի կողմէն:

ԳՐԻԳՈՐ (Ս.) ԼՈՒՍՍԻՈՐԻՉ. — Մեր եկեղեցական պատմութիւնը աւանդաբար Ս. Գրիգոր Լուսաւորչի կ'ընծայէ Երուսաղեմի Տնօրինական տեղերու մեծ եկեղեցիներուն շինութիւնը. ինչպէս Գողգոթան, Ծնունդը, Ս. Յակոբը, Հրեշտակապետք, Փրկիչը, Վերնասունը, Հաւքարանը, Խաչ գիւտը և Ս. Գերեզմանը, եւ այլն, Երուսաղեմի հայկական վանքերէն շատերը շինուած կը նկատուին Ս. Լուսաւորչին կողմէն. այս մտօք կ'արտայայտուի Անաստաս վրդ. իր վասն վանօրեից որ ի Ս. փառայն յերուսաղեմ. գրուածքին մէջ: Դաշանց բողոքի հետեւելով՝ Կիրակոս Պատմիչն ալ (էջ 6-7) վերեւ յիշուած եկեղեցիներուն շինութիւնը կ'ընծայէ Ս. Լուսաւորչին, և կ'աւելցնէ թէ «եւ ասն կախեաց կանթեղ մի Սուրբ Գրիգոր ի վերայ գերեզմանին Քրիստոսի. և խնդրեաց յԱստուծոյ ազօթիւք, առանց զգալի լուսոյ լուցօնել ի Սուրբ Պատեքի տօնին. որ լինի մինչև ցայսօր նշանն»: Գրիգոր վրդ. Տաթևացին ալ այս մասին կը գրէ. «... ի սբ. քաղաքն երուսաղէմ յաւուր շարաթու մեծի ի խնդրոյ նորա (Լուսաւորչին) վառեցաւ լոյսն ի սբ. Յարաքիսն (Չմբան հասոր էջ 444):

Չորրորդ վկայ՝ լոյսն զգալի որ լինն ժամու ծագէ ի գերեզմանէն տէրերեւ ամենայն մարդկան, զոր ոչ կարեն զայս ուրանալ ազգն ժխտողաց, զի տես աչացն հաստատ է քան զլուր լսելեացն. և այս 'ի խնդրոյ սբ. Լուսաւորչին մերոյ՝ ի պատիւ ազգիս հայոց. (Անդ. էջ 605): Իսկ Ս. Լուսաւորչի Երուսաղէմ